

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Ի Սուրբ Էջմիածին, 1876 Յուլի 20.

(Շարունակութիւն, տես թիւ 5.)

Հին բերդին մէջ կայ եկեղեցի մի ևս վրաց ձեռքը, ուր է գերեզման Սրբաբուհայի Շուշանկայ դստեր մեծին Վարդանայ, ուխտատեղի քրիստոնէից, որ սահմանեալ օրերը միայն բաց է, ունին այլ շատ եկեղեցիներ և կուսանաց վանքեր, թէ քաղաքին մէջ և թէ շրջակաները, բնակչաց արանց և կանանց հագուստը խառն է, ծերունիք հին վրացի ձեւով, նոյնպէս և կանայք առանին, իսկ երբ դուրս կ'ելնեն ճերմակ սաւանդ կը ծածկուին, իսկ մի մասը որ հարուստ և երիտասարդ գերդաստաններէ կը բաղկանան, առհասարակ արք և կանայք Եւրոպական նորաձեւութեանց հետեւած են, եւ կանանց գլուխը միայն վրացաց ձեւով մնացած է: Հանքային ջրոց բազմութիւնը, որոց օթեակները երեք կարգի բաժնուած են: Քաղաքին մի մասը երեւելի անձինք օր քան զօր փառաւոր շէնքերով կը պայծառացնեն, եւ տէրութիւնն ըստ բաւականին հոգ կը տանի հասարակոց շինութեան, եւ գետին վերայ տեղ տեղ երկաթեայ հաստատուն կամուրջներ ձգուած է, այլ բնակիչք երբէք վտանգէ զերծ չեն մնացած գետին վնասներէն, և միշտ իրենց պէտքը կը հոգան անտի, բարձր և մասնաւոր տեղերը շոգեշարժ մեքենայով ջուր կը հանուի: Այլ և այլ քաղաքներէն եւ նոյն իսկ Թուրքաստանէն երեւելի վաճառականք շատ կը յաճախեն: Գլխաւոր վաճառքն, մետաքս, բուրգ, բամբակ, գորգ, շալ, արծաթեղէնք եւ ոսկեղէնք, որոնք Պարսկաստանի և Ռուսաստանի նահանգներէն կը փոխադրուին Եւրոպայ, և այլ տեղեր: Տիփսիսի վաճառ

ականք կը յաճախեն նաեւ տոնափաճառները, որոց մէջ երեւելի է Մալարիայ, տարին մի անգամ: Մրգեղէնը առատ է որ շրջակայ սահմաններէն կը փոխադրեն, ունին առատ պարտեզներ և այգիներ, յորոց կը լինի աղնիւ խաղող և ընտիր գինի, և ընտրեւորոյն է կաթնթի գինին, պարտեզները քաղաքէն դուրս կուր գետին եզերքը կը տեսնուին, և գետին վերայ շինուած փայտաշէն անիւներով կոռոզին:

Յեւ Սգոստոսի մեկնեցանք Տիփսիսէն կառքով կէսօրուան միջոյնները, ճանապարհը մինչ յԵրեւան խնամով կառուղի շինուած է, և պէտք եղած նորոգութիւնը կ'լինի շարունակ: Բաց տեղ տեղ ամրան սաստիկ փոշի և ձրմբան ցիխը անպակաս է: Ճանապարհին կարգաւորեալ փողի կայաններ շինուած են որոնք ճանապարհորդաց մեծ գլուխութիւններ կը մատակարարեն, թէ գրաստուց և թէ հանգստանալու մասին: Երբ երեկոյն առաջին կայանը հասանք, պզգալի տեսարան մի ներկայացաւ մեզ, զի նախընթաց օրը աւազակները ճանապարհորդաց վերայ յարձակելով կողոպտեր և միոյն ձին սպաներ էին, թէպէտեւ ոստիկանութեան զինուորները հետամուտ էին գտնալ, նոյն գիշերը կարի զգուշութեամբ ննջեցինք և արշալուստն կանուխ մեկնեցանք անտի անվտանգ: Տիփսիսի դաշտերը շատ ընդարձակ են, և երկրագործութիւնը ըստ հին սովորութեան, եւ կը յուսացնէին զմեզ արգաւանդահող և բերրի լինել, այս կողմերը երբէք անտառ չեն տեսնուիր, ճանապարհին պատահեցան մեզ բազմաթիւ սայլորդք, որք մրգեղէն պարեն և այլ ուտեստի վերաբերեալ իրեր կը փոխադրէին ՚ի Տիփսիս: Նոյն օրը հասանք Սընդի փողի կողեցեալ գետեզերքը ուր կային քանի մի Մալուկանաց

տուններ, գետին վրայ ձգուած բա-
րուկիր կամուրջը չորս կամարներէ կը
բաղկանայ, աստ երկու ժամ հան-
գիստ տալէն զինի մեկնեցանք, գե-
տեղերքի երկարութեամբ խիտ ծառա-
տունկը և պարտէզներ կ'երեւէին, և
մնացեալ տեղերը ընդարձակ դաշտեր,
և երբեմն փոքրիկ բլրակներ, այս կող-
մերը նախնիք մեր կը կոչէին Գուգա-
բայ աշխարհ որ Հայաստանի մի գա-
ւառն էր. կը տեսնուին թուրքաց ա-
ւերակ գիւղերը աստ և անդ ցրիւ,
տունները գետնափոր իրրեւ նկուղ ան-
շուկ և հողաչէն. և ճանապարհին վե-
րայ նոցա գերեզմանատեղին, մեծա-
մեծ կոթողներ կանգնած. երեկոցեան
հասանք կայան մի և ըստ սովորու-
թեան գիւղերը անցուցինք, և առաւօ-
տուն մեկնեցանք երկաթաշէն կամուր-
ջէ մի անցնելով. աստ զիմուորեցին
զմեզ գեղեցիկ առուներ և ջրեր, ու
րանք խոխոջալով այս անդր կրնթա-
նան մշակուած արտերը և պարտէզ-
ները սուգելու, մացառուտ և ան-
տառուտ տեղիք, և հայազգի գիւղա-
կանք երեւիլ: Երեկոցեան հասանք
Քելլան ասրայ կոչեցեալ գիւղը, ճանա-
պարհին վերայ շինուած է պանդոկն և
կրպականին, գետակը ձորակին մէջէն
կանցնի, համանուն գիւղը գետոյն ա-
րեւելեան կողմը լեռան ստորոտը տա-
փարակ տեղը շինուած է, բնակիչք
ամբողջ հայազգի, գիւղին շրջապատը
այգի և պարտէզ, անուանի է կարմը-
րուկը, (այն է Գլճըգ): Իսկ լեռները
ամբողջ անտառով ծածկուած մինչեւ
Գեղամայ ծովը, կը դարմանեն ոչխար
և այլ ընտանի կենդանիներ, անտառ-
ները ուր ուրեք և իցէ ամբողջապէս
Ռուսաց տէրութեան սեփականու-
թիւնն համարուած է, և ըստ պատ-
շաճին ամեն տեղ հսկող պահապան-
ներ զրուած են, պետք եղած ատաղ-

ձը և առանին ի կիր առնելոյ փայտը
ինքը կը մտաւարարէ, և վաճառուած
գերաններուն վերայ սահմանեալ կնիքը
կը դրոշմուի, այս օրէնքէն դուրս ոչ
որ կարող է անտառէն գնէ ճիւղ մի
կտրել, և յանդգնողաց պատիժ սահ-
մանուած է: Առաւօտուն կանուխ
մեկնեցանք աստի միշտ գէպ ի դար ի
վեր ելլալով, բովանգակ լեռները խիտ
անտառներով մշտագալար, հովիտնե-
րէն կրնթանան առատ ջրեր և գե-
տակներ, օդը բարեխառն առողջ և
կենդանի ջուրը զովարար, այս անտառ-
ներուն մէջ կը գտնուին նաեւ մրգա-
բեր ծառեր, բայց անպատուաստ և
վայրի, ինչպէս տանձ խնձոր սալոր և
այլն: Կէս օրին հասանք Տիլճան կո-
չեցեալ գիւղը, լեռնակներու վերայ
շինուած, գիւղին ստորոտը հիւսիսա-
յին կողմն ձորակին մէջէն կ'անցնի
գետակը, բայց լեռներուն ստորոտէն
բարեհամ աղբիւրներ կը բլլան, ջուրը
խիտ պաղ, բնակիչք հոյազգի եւ
գաղթական Մալականներ, Հայք մեծ
մասամբ Տերութեան սրաշտօններ կը
վարեն, տունք բնակութիւնք տակաւ
կը բարեկարգին, ընդ որս և կառա-
վարչին օթարանը, և մալականաց բը-
նակարանները ըստ օրինի կարգաւ և
օրինաւոր և տախտակամած, կան այն-
պիսի տուններ՝ որք խին դրութեամբ
գետնափոր ցած և անշուք, որք ըստ
մեծի մասին Հայոց կը վերաբերին, իսկ
կառավարութեան կողմէն կը շինուին
ուղղագիծ կարգաւ այլ և այլ պիտա-
նի և կարեւոր շէնքեր: Երանի կլիններ,
որ մեր Հայազգի եղբայրներէն ոմանք
ալ գնէն նոցա օրինակին հետեւին,
խափանեն իրենց այդ գետնափոր գէճ
և խոնավ հոգետանջ բնակարանները,
աշխատին իրենց տունները օրինաւոր
կարգաւ յարդարել, իրենց և ընտա-
նեաց կեանքը ապահովել:

(Երբուհայիլ)